

---

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՅՈՒՊԱՏՈՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼՈՌԻՍ ՉԵՄԲԵՐՍԸ 1909 թ. ԱՂԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐԻ  
ՄԱՍԻՆ

1908 թ. հուլիսին տեղի ունեցած օսմանյան հեղափոխությունը բռնատիրությունից փրկվելու և ապահով գոյության սին հույսեր ներշնչեց արևմտահայությանը: Երկար ժամանակ չպահանջվեց (ընդամենը 9 ամիս), որ այդ հույսերն ի դերն էլնեն: 1909 թ. ապրիլին թուրքական, այսպես կոչված թե՛ առաջադիմական ու թե՛ հետադիմական ուժերի նենգ փոխհամաձայնությամբ, օսմանյան կանոնավոր բանակի գործուն մասնակցությամբ, Ադանա քաղաքի և ողջ վիլայեթի հայությունը մատնվեց դաժան կոտորածի և կոդուպուտի, որի նպատակը Հայկական Կիլիկիայի ուժն ու հարստությունը, ազդեցությունն ու դիրքը կործանելն էր: Միայն գոհերի թիվը կազմեց ավելի քան 30000<sup>1</sup>: Այս ջարդերը մեկընդմիջտ հաստատեցին, որ թուրքական քաղաքական մտքի ցանկացած դրսևորման համար բազմազգ Օսմանյան կայսրության փլատակների վրա նոր ազգային թուրքական պետությունը չի կարող կայանալ՝ առանց այդ կայսրության միուս ազգերի (և առաջին հերթին՝ հայերի) էթնիկ գտման ու հայրենագրվման, բնաջնջման և ուժացման:

Արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի տապալումը և սահմանադրական կարգերի՝ «հուրիեթի», հռչակումը արևմտյան տերություններում «Հիվանդ մարդու»՝ Օսմանյան կայսրության ապաքինման պատրանքներ ծնեցին: Աշխուժացավ կայսրությունում թվացյալ քաղաքակրթական համընդհանուր ծարավին հագուրդ տալ ցանկացողների գործունեությունը: Դրանցից էր Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցությունը (ԵՔԸ): ԵՔԸ շարժումը Օսմանյան կայսրություն էր ներթափանցել XIX դ. 80-ական թթ.՝ այնտեղ արդեն գործող եվրոպացի և ամերիկացի միսիոներների կողմից հիմնած քրիստոնեական քոլեջների միջոցով, որտեղ սովորելու մեծ ձգտում ունեին հատկապես հայ երիտասարդները: Հենց այս քոլեջների ուսանողների շրջանում էլ ձևավորվեցին ԵՔԸ ուսանողական ասոցիացիաները: Հետագայում այդ քոլեջների շրջանավարտների միջոցով ԵՔԸ շարժումը սկսեց տարածվել դեպի Փոքր Ասիա, Կիլիկիա և Արևմտյան Հայաստան՝ տեղերում ձևավորելով ԵՔԸ քաղաքային ասոցիացիաներ<sup>2</sup>:

«Միսիոներները, անկասկած, հետապնդում էին ոչ միայն կրոնական, դավանաբանական և գաղափարախոսական խնդիրներ, այլև քաղաքական նպատակներ՝ հանդես գալով իրենց պետությունների քաղաքական, տնտեսական ու մշակութային շահերի պաշտպանության դիրքերից,

---

<sup>1</sup> Գասպարյան Ռ., Հոդվածների և հրապարակումների ժողովածու, Ե., 2013, էջ 47:

<sup>2</sup> Գործածվում է նաև Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա (ԵՄՔԱ) տարբերակը:

այնուամենայնիվ, նրանց գործունեությունը կրթության բնագավառում արժանի է բարձր գնահատականի, քանզի հայ երիտասարդությունը, համապատասխան կրթություն ստանալով, ծանոթանում էր համաշխարհային մշակույթին, հասունանում գաղափարապես և քաղաքականապես<sup>3</sup>: Եվ ահա, «հուրիեթով» քաջալերված, ամերիկյան ԵՔԸ-ն որոշում է բացառապես տեղի քրիստոնյաներից (մեծ մասամբ հայերից) կազմված համաօսմանյան ԵՔԸ կազմակերպություն ձևավորել՝ հույս ունենալով ներգրավել նաև մահմեդականներին: 1908 թ. Ամերիկայի ԵՔԸ միջազգային կոմիտեն Լոուսն Չեմբրսին նշանակում է Օսմանյան կայսրությունում ԵՔԸ համակարգող քարտուղար, որը 1909 թ. մարտին այցելում է Գիլիկիա և ջարդերի ժամանակ գտնվում էր Ադանայում: Այդ ողբերգական օրերին Լոուսն Չեմբրսը աչքի է ընկնում բացառիկ խիզախ ու հայանպաստ գործունեությամբ, երբ հատկապես Բրիտանական կայսրության փոխկուսակալ Ռաուլ-Ուայլիի վիրավորվելու պատճառով նրա վրա են դրվում վերջի-նիս պարտականությունները: Մի կողմ թողնելով Թուրքիան քաղաքա-կրթելու սին տեսլականը՝ նա լծվում է հայերին ջարդերից փրկելու, վիրավորներին ու անօթևան մնացածներին օգնելու գործին<sup>4</sup>:

Ծագումով կանադացի Չեմբրսների ընտանիքը ներգրավված էր Օսմանյան կայսրությունում Օտարերկյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդի կողմից համակարգվող միսիոներական գործունեության մեջ: Լոուսնի հայրը դասավանդում էր Ադաբազարի մոտակայքում գտնվող հայաբնակ Պարտիզակի Բութանիա քոլեջում, իսկ հորեղբայրը՝ Ուիլյամը, գործում էր Ադանայում և մինչև 1921 թ. տեղի ԵՔԸ նախագահն էր<sup>5</sup>: Ադանայի ջարդերի ժամանակ Ուիլյամ Չեմբրսը նույնպես հայերին պատսպարելու և փրկելու, իսկ ջարդերից հետո նրանց կարիքները հոգալու համար ջանքեր չի խնայել<sup>6</sup>:

Ստորև ներկայացնում ենք Լոուսն Չեմբրսի՝ Ամերիկայի ԵՔԸ քարտուղար Ջոն Ռ. Մորթին ուղղած երեք զեկուցագիր-նամակները Ադանայից: Այս ձեռագիր փաստաթղթերի բնօրինակները պահվում են ԱՄՆ-ի Մինեսոտայի համալսարանի Է. Լ. Անդերսոնի անվան գրադարանի՝ Քաութս ընտանիքի ԵՔԸ արխիվներում<sup>7</sup>: Ամբողջությամբ տպագրվում են առաջին անգամ: Ուղղագրական կամ կետադրական շտկումներ չեն կատարվել: Մեր

<sup>3</sup> Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 183:

<sup>4</sup> **Balakian P.** *The Burning Tigris – the Armenian Genocide and America's Response*, New York, 2004, p. 148-155.

<sup>5</sup> YMCA World Alliance Archives, John R. Mott Building, Geneva, Switzerland: Box - Adana.

<sup>6</sup> Միմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Գիլիկիայում (1909 թ. ապրիլ), Ե., 2009, էջ 185:

<sup>7</sup> Kautz Family YMCA Archives, University of Minnesota Libraries, Minneapolis (MN), USA: International Division: Box - Turkey 1884 – 1929. <https://www.lib.umn.edu/ymca>

մեկնաբանությունները տրված են ծանոթագրություններում: Փաստաթղթերը վերնագրվել և համարակալվել են մեր կողմից:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վ. Վ.

ԼՈՌԻՍ ԶԵՄԲՐՍԻ ՆԱՄԱԿ-ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՔԸ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՋՈՆ Ռ. ՄՈԹԹԻՆ ԱԴԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

April 18, 1909  
Adana

John R. Mott Esq.<sup>8</sup>.c/o Brown Shipley & Co, 123 Pall Mall, London

Dear Mr. Mott:-

You have doubtless heard of the time we have had in Adana since Wed. morning. The city was for three days handed over to pillage and fires. Large number of the people, Armenians & Turks, have been killed & the loss of property is enormous. The night I have seen have been awful. We have had Major Doughty-Wylie, British Consul at Mersine<sup>9</sup>, in Adana during these days & his presence has been a comfort to us. I have put in my time translating for him as he had no dragoman, & I have been spending the nights in the government building, having today had my clothes off & a bath for the first time since Wed. & I am spending tonight at home, in my uncle's house. My uncle & aunt & cousin<sup>10</sup> & all the Armenians who were gathered here for the annual meeting are safe, accept two, a Mr. Rogers & a Mr. Maurer<sup>1</sup>. Under the circumstances I have done no writing on my article for the Student World<sup>11</sup> & can make no definite promise to get it in, for we cannot foresee the future. Things are much quieter now. My trip to the interior my have to be given up.

I am Yours sincerely L. P. Chambers

<sup>8</sup> Esq. (Esquire)-էսքուայր՝ պատվավոր տիտղոս Անգլիայում, նամակագրության մեջ Esq. հապավումը գործածվում է նաև ազնվագարմ պարոն իմաստով:

<sup>9</sup> Mersin (Մերսին) - քաղաք-նավահանգիստ Կիլիկիայում, Ադանայից 86 կմ հարավ-արևմուտք:

<sup>10</sup> Նկատի ունի իր հորեղբայր Ուիլյամ Չեմբրսին ու նրա ընտանիքը [տե՛ս Միմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Ե., 2009, էջ 375]:

<sup>11</sup> Student World - ԵՔԸ Օտարերկրյա առաքելությունների ուսանողական կամավորական շարժման և Համաշխարհային ուսանողական քրիստոնեական համադաշնության համատեղ պարբերական:

P.S. Please send on this letter or a copy to the N. Y.<sup>12</sup> comm<sup>13</sup>. & ask them to notify the friends whose addresses are on the back of this sheet.

Mrs. Jessie Johnston, Mt. Pleasant, Vancouver, B. C.<sup>14</sup>  
 Mr. J. N. Chambers, Kennevar Farm, Woodstock, Ont.<sup>15</sup>  
 Mr. Jas. Chambers, National Bank, Norwich, N. Y.  
 Miss Kate Chambers, Denligh Hall, Bryn Maws, Pa<sup>16</sup>.  
 Mr. D. M. Gordon S. D. Queen's University, Kingston, Ont.

**ԼՈՌԻՍ ՉԵՄԲԵՐՍԻ ՆԱՄԱԿ-ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՔԸ  
 ՔԱՐՏՈՒՂԱՐ ԶՈՆ Ռ. ՄՈԹԹԻՆ ԱԴԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ**

April 23, 1909  
 Adana

Dear Mr. Mott:-

A letter from me to you the other day will have notified you that we have passed through a massacre in the course of which thousands of Armenians + two of our American missionaries were killed. The Armenians in some quarters of the city were armed & defended themselves well, killing number of Turks & wounding more. The massacring and looting continued from Wed. noon, April 14<sup>th</sup> to Fri. noon, the 16<sup>th</sup>, then there was a lull, some killing and plundering continuing a little, while individual cases reported even till today. In the villages of the district the Armenians are almost annihilated. This trouble seems to have been coincident with reactionary disturbances at Constantinople.

As a result of this trouble I have been pressed into the service of the English consul here as temporary dragoman, his own dragomans being afraid to venture out very much. The fact that the consul is confined to bed with a broken arm has thrown me into closer relationship with the government as his deputy, than I would have had as mere interpreter. And I am not only overwhelmed with a sense of the relief work to be accomplished, but am doing expecting to be appointed on a commission to visit the devastated regions. I have urged on the consul's behalf to be sent as peace envoy before the brokering was done, but the

<sup>12</sup> N. Y. (New York) - Նյու Յորքի փոստային հապավումը:

<sup>13</sup> Comm. - նկատի ունի ամերիկյան ԵՔԸ միջազգային կոմիտեն:

<sup>14</sup> B. C. (British Columbia) - Կանադայի Բրիտանական Կոլումբիա նահանգի փոստային հապավումը:

<sup>15</sup> Ont. (Ontario) - Կանադայի Օնտարիո նահանգի փոստային հապավումը:

<sup>16</sup> Pa (Pennsylvania) - Ամերիկայի Փենսիլվանիա նահանգի փոստային հապավումը:

governor always found objections which he considered sufficient to prevent my going.

Although I have - in the course of work with Turks - to spend much time in waiting, both my circumstances & my sleepiness have prevented me from finishing my article for the Student World. When I find time to get it ready I will send it. But under the circumstances I will ask you to please be limited. I hope others will get to you a few articles.

May I please have your sanction to devoting myself these days to work in connection with the consular service & with the relief? (It is estimated there are 15'000 homeless in Adana today.) How long it may take me I do not know, but hope I may be free to take up again the YMCA work in a month, at least I shall not fail to be present at Oxford & at Barmen<sup>17</sup>. If the massacres are general, then it seems to me it will take the Christians long to recover sufficiently from the blow so as to be able to prosecute active association work. However, I still look forward to a great future of that work in Turkey. Has that the bright moments of new regime should be so cruelly shattered that people now have no other thought than to feed & be fed, having neither spirit nor time for higher culture, physical or mental.

I am Yours sincerely L. P. Chambers

ԼՈՈՒՍՆ ՉԵՍԲԲՍԻ ՆԱՍԱԿ-ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԵՔԸ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԶՈՆ Ռ. ՄՈԹԹԻՆ ԱԴԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

May 5, 1909  
Adana

Mr. John R. Mott, c/o Brown Shipley & Co, 123 Pall Mall, London

Dear Mr. Mott:-

I regret the statistics and information which I had gathered and was putting into an article, have disappeared during the troubles of these past three weeks. I had left the papers in a bundle on the desk in my room on the Wed. morning that the massacre began, I was caught at the government house where I was obliged to spend four nights as a refugee. I am glad to say that during that time twice I have been able to act as dragoman to some extent to Major Doughty-Wylie our British Consul. During those days our house was filled with hundreds of refugees. And later on when the awful conflagrations that have destroyed the

<sup>17</sup> Barmen (Barmen-Elberfeld)- քաղաք Գերմանիայում, այժմ՝ Վուպերտալի մաս: Այստեղ 1909 թ. հուլիսին տեղի է ունեցել ԵՔԸ համաշխարհային 17-րդ կոնֆերանսը:

best part of Adana led us to fear our house would also go, our thing were packed up and the most valuable goods sent to the consulate. And in all this ado many of my papers have disappeared. But I hope that you have received from Mr. McLeuahan of Issmit<sup>18</sup>, Dr. Dorman of Beyrut<sup>19</sup>, and Dr. Gates of Robert Collage<sup>20</sup> articles which will help to keep Turkey before the eyes of the student world. The awful blow which the Christian population of this province received and the reign of terror of the past three weeks make all other problems seem so unreal. It seems to me as if the world in which I did Y.M.C.A. work was a totally different world from the one I am in now. And similarly the upheaval at Constantinople, though seemingly called favourable to liberty and constitutionalism make on hesitate to pronounce on the future of Turkey & the prospects of association<sup>21</sup> work here. I am still hopeful & feel that the Y.M.C.A. has a great part in the regeneration of Turkey. But just at present the question of keeping body & soul together, the fight against famine & epidemic, occupy the whole foreground of our mission. When the smoke clears away a bit, & we can look around & take stock, then I will be better able to say exactly what kind of work the Y.M.C.A. can do in Turkey today. And I hope I shall be able to make some such statement at the Oxford & Barmen conferences.

I am now planning to go to Hadjin<sup>22</sup>, where I had previously planned to go Y.M.C.A. work, but there I am now going partly to relieve American ladies who have been alone during these three weeks of strife, & partly to act as representative of the British & American consulates. I expect to have my travelling expenses paid - though nothing has been said on that score - but in case I will not draw on you for expenses as I am not doing association work. How long I shall stay in Hadjin depends upon what I find on arriving there.

By waiting so long here for annual meeting, I missed the meeting here which was broken up & have all my other plans for Y.M.C.A. work until summer interfered with. But I do not regret having been here to help my uncle through this crisis.

I am enclosing a letter from Anatolia College<sup>23</sup>, Marsovan<sup>24</sup>, the only one I can lay hands on at present. But the statements made therein are almost literally time for college Y.M.C.A. work throughout Turkey. I also forward some photographs under separate cover, but numbered, as follows.

<sup>18</sup> *Issmit (Izmit) - Իզմիթ (Նիկոմեդիա) քաղաքին մերձակա Պարտիզական գործող Բութանիա քոլեջը:*

<sup>19</sup> *Beyrut (Beirut) - նկատի ունի Բեյրութում գործող սիրիական բողոքական քոլեջը:*

<sup>20</sup> *Robert Collage- Ռոբերտ քոլեջ Կ. Պոլսում՝ հիմնադրված 1863 թ. բողոքական միսիոներների կողմից:*

<sup>21</sup> *Association - օգտագործվում է որպես ԵԲՀ-ի հոմանիշ:*

<sup>22</sup> *Hadjin - Հաճն, քաղաք Կիլիկիայում, Ադանայից 155 կմ հյուսիս-արևելք:*

<sup>23</sup> *Anatolia College - Անատոլիա քոլեջ Մարզվանում՝ հիմնադրված 1886 թ. բողոքական միսիոներների կողմից:*

<sup>24</sup> *Marsovan (Marzvan) - Մարզվան, հայաբնակ քաղաք Սեբաստիայի վիլայեթում, Ամասիայից 49 կմ հյուսիս-արևմուտք:*

1. Athletic club (Greek). Anatolia College, Marsovan.
2. Football team
3. Orchestra St. Paul's College<sup>25</sup>, Tarsus<sup>26</sup>.
4. Part of campus.
5. Students quarrying stone for building St. Paul's College, Tarsus.
6. A new student, St. Paul's College, Tarsus.

I enclose also five pages printed matter from a report about Mardin<sup>27</sup> High School. This school is not of a very high grade, but it is doing substantial work, & I believe has a great future. It may stand as a type of the interior school. Perhaps some photographs from this report may suit the columns of the student world.

Please return to me (after you have made all use of them) the letter from Marsovan & the report from Mardin.

Also please forward to Mr. Gardiner a copy of such photographs or this letter as you may see fit.

And please excuse me both for my failure to get to you the article you wanted for the Student World & also for asking you to write the letter to Mr. Gardiner which I should write myself had I the time.

Assuring you of the interest with which I read your letters, especially your account of the work in Russia, & asking your prayers for the destitute & broken hearts here.

I remain yours sincerely L. P. Chambers

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԵԲԸ-ն հիմնադրվել է 1844 թ. հունիսի 6-ին Լոնդոնում: Արդեն 1855 թ. դարձել է համաշխարհային շարժում (տե՛ս **Shedd, Clarence Prouty and others: History of the World's Alliance of Young Men's Christian Associations, London, 1955**): Լինելով քրիստոնեական արժեքները լիովին ընդունող կազմակերպություն և ստեղծվելով Բրիտանական կայսրությունում՝ ԵԲԸ-ն ի սկզբանե ունեցել է բողոքական հենք: Սակայն ժամանակի ընթացքում իր մասնաճյուղերը բացելով ողջ աշխարհում՝ դարձել է համակերպական կառույց: Այսօր ԵԲԸ-ն գործում է աշխարհի 119 երկրներում և ունի շուրջ 58 միլիոն անդամ: Համարվում է աշխարհում ամենահաջողակ, ամենաերկարակյաց ու ամենատարածված հասարակական կազմակերպություններից մեկը:

2. XIX դ. վերջին Օսմանյան կայսրության տարածքում գործող միսիոներական շարժումները, հատկապես Օտարերկյա առաքելությունների լիազորների ամերիկյան

<sup>25</sup> St. Paul's College - Սուրբ Պողոսի քոլեջ Տարսոնում՝ հիմնադրված 1888 թ. բողոքական միսիոներների կողմից:

<sup>26</sup> Tarsus - Տարսոն, քաղաք Կիլիկիայում, Ադանայից 41 կմ հարավ-արևմուտք:

<sup>27</sup> Mardin - Մարդին (Մարտին), քաղաք Արևմտյան Հայաստանում, Դիարբեքիի վիլայեթում, Տիգրանակերտից 92 կմ հարավ-արևելք:

խորհուրդը, ունեին մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ: Դրանցից էին հետևյալ քոլեջները՝ Արմենիան՝ Խարբերդում (հիմնադրված՝ 1854 թ.), Միրիական բողոքականը՝ Բեյրութում (1862 թ.), Ռոբերտը՝ Կ. Պոլսում (1863 թ.), Բութանիան՝ Պարտիզականում (1874 թ.), Անատոլիան՝ Մարզվանում (1886 թ.), Մբ. Պոդոսը՝ Տարսոնում (1888 թ.), Միջազգային քոլեջը՝ Զմյուռնիայում (1891 թ.):

3. Մինչ Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը Օսմանյան կայսրությունում գործել են շուրջ 40 ԵԲԸ ասոցիացիաներ (տե՛ս **Steuer, Kenneth**: *Pursuit of an 'Unparalleled Opportunity' - The American YMCA and Prisoner of War Diplomacy among the Central Power Nations during World War I, 1914-1923*, Kalamazoo, Michigan, 2008): Հիմնականում հայերի անդամությամբ ԵԲԸ-ներ են գործել շուրջ 30 քաղաքներում, այդ թվում՝ Ադաբազարում, Ադանայում, Այնթապում, Խարբերդում, Հաճնում, Մարաշում, Մարզվանում, Վանում:

4. Անատոլիա քոլեջում 1896-1901 թթ. սովորել է հանճարեղ բանաստեղծ Միսաք Մեծարենցը:

5. Բութանիա քոլեջում դասավանդել է Լոուսն Չեմբրսի հայրը, իսկ 1910 թ. հետո նաև ինքը՝ Լոուսնը՝ միժամանակ շարունակելով աջակցել քոլեջի ուսանողական և Ադաբազարի քաղաքային ԵԲԸ - ներին:

6. Օտարերկյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը (անգլերեն՝ *American Board of Commissioners for Foreign Missions - ABCFM*) հիմնադրվել է 1810 թ., ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում:

7. 1946 թ. Խաղաղության նորեկյան մրցանակի արժանացած Ջոն Ռ. Մոթթը (1865-1955 թթ.) Ադանայի ջարդերի ժամանակ եղել է Ամերիկայի ԵԲԸ քարտուղար, այդ կազմակերպության Օտարերկյա առաքելությունների ուսանողական կամավորական շարժման հիմնադիրը և համակարգողը: Կարևորագույն դերակատարություն է ունեցել Օսմանյան կայսրությունում ԵԲԸ և քրիստոնեական ուսանողական շարժման տարածման գործում, եղել է 1895-1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական կոտորածների ակննատեսը: 1915-1928 թթ. Ամերիկայի ԵԲԸ կոմիտեի գլխավոր քարտուղարն էր, իսկ հետագայում՝ Համաշխարհային ԵԲԸ նախագահ: Նաև եղել է Համաշխարհային ուսանողական քրիստոնեական համադաշնության (*World-WSCF*) հիմնադիր գլխավոր քարտուղարը (1885-1920 թթ.), 1948 թ. Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ կազմակերպության (*World Council of Churches-WCC*) հիմնադրման նախաձեռնողներից էր:

8. Օտարերկյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի միսիոներներ Դեյվիդ Ռոջերսը և Հենրի Մորերը սպանվել են Ադանայում, 1909 թ. ապրիլի 15-ին: Նրանց հետ է եղել նաև ամերիկացի Ստեֆան Թրոուբրիջը, որը փրկվել է: Ըստ վերջինիս վկայության նրանք երեքով փորձել են հանգցնել աղջիկների միսիոներական դպրոցին սպառնացող հրդեհը, երբ թուրքերի նպատակաուղղված կրակոցները մահացու վիրավորել են Ռոջերսին և Մորերին (տե՛ս **Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 372 -376):